

թիւն ու առանձնակի շահ հետապնդելու, իսկ ժողովուրդը, ազգութիւն և հանրային շահ: Ազգայնականութիւնը կը ցոլանայ այս շրջանին մէջ: Հայ ժողովուրդը երբ զէնքի կը դիմէ, Մարական թագաւորական ցեղը կը դադրի տիրապետելէ Հայերու վրայ:

Արսաւես Բ.ի գահ բարձրանալու ժամանակ. — Արտաշէսի և Երուանդի պատերազմներու մէջ, Մուրացան նախարարութենէն Արգամի գործունէութեան պատկերը կը փայլեցնէ ուժ, իշխանութեան մասնակցութիւնը՝ գահին երկրորդականութեամբ, փառասիրութիւն, դաւաճանութիւն, և զէպ ի յաղթողն հակելու միտումն: Բիւրդ ցեղերը շատ վարակուած են այս սովորոյթէն, գուցէ ժառանգական է այդ:

Արսաւագի ժամանակ. — Տեղի կ'ունենայ Մարաց ցեղի ջնջումը Հայերէ, այն կասկածի տակ, որ Արգամը նպատակ կ'ունենայ թագաւորութիւնը խել:

Միայն մի քանին Արտաշիսի հաճութեամբ պալատը դիմելով կ'ազատուին: Գուցէ Մարական նախարարութեան սերմի մը պահպանման նախատեսութիւն մ'էր այս, ապագայ իշխանական կամ թագաւորական պէտքերուն գործածութեան համար:

Ասկէ յետոյ մինչև Արշակունեաց թագաւորութեան անկումն՝ Մարաց մասին ոչ մի ուշադրութեան արժանի յիշատակութիւն կայ Հայ պատմութեան մէջ. նոյնպէս ոչ մէկ յիշատակութիւն Բրիտոնեական առաջին պատերազմէն մինչև Արարացիներու արշաւանքը: Ինչպէս և արարական արշաւանքներէն մինչև Ռուբինեանց իշխանութիւնը:

Կը հեռել թէ՛ Արգամի ու իր բոլոր ցեղերու ջնջումով, Մարերու պատմական դերը կը վերջանայ Հայաստանի մէջ:

Մարերու և Հայերու այս համեմատական պատմութեան եզրակացութիւնը այժմ կու տայ մեզ յետագայ ամփոփումը:

«Հայ պատմութեան մէջ Մար անունը կը լուէ այս ճիւղադրական ճանապարհով. ու տեղի կու տայ Հեթումի օրով Բիւրդ իշխանի անուանը, որ ըստ պատմիչների Աղգաւ Հայ,